ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2016թ. N------Ա

ՈՐՈՇՈՒՄ

ՍՈՒՐԵՆ ԵՐԵՄՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ
ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

Տալ համաձայնություն ականավոր պատմաբան, ակադեմիկոս և քարտեզագիր Սուրեն Երեմյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Բաղրամյան պողոտա հ. 50գ հասցեում փակցնելու համար։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՍՈՒՐԵՆ ԵՐԵՄՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ականավոր պատմաբան, ակադեմիկոս և քարտեզագիր Սուրեն Երեմյանը ծնվել է 1908թ. ապրիլի 11-ին Թբիլիսիում: 1931թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի պատմատնտեսագիտական ֆակուլտետը:

1935-1941թթ. Սուրեն Երեմյանը եղել է Խորհրդային միության գիտությունների ակադեմիայի արևելագիտության ինստիտուտի Լենինգրադի բաժանմունքի գիտաշխատող, 1941-1953թթ.՝ Խորհրդային Հայաստանի գիտությունների ակադեմիայի մշակույթի պատմության ինստիտուտի գիտաշխատող, 1953-1958թթ.՝ Խորհրդային Հայաստանի գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտի տնօրեն, 1971-1992թթ.՝ Խորհրդային Հայաստանի գիտությունների ակադեմիայի հին պատմության բաժնի վարիչ:

1953թ. Սուրեն Երեմյանին շնորհվել է պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճան, 1955թ.՝ պատմական գիտությունների պրոֆեսորի կոչում :

1953թ. նա եղել է Խորհրդային Հայաստանի գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ, 1963թ.՝ Խորհրդային Հայաստանի գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս:

Հիմնական աշխատությունները վերաբերում են հայ ժողովրդի կազմավորման և հին Հայաստանի պետական կազմավորումների պատմության հարցերին, հին և միջնադարյան Հայաստանի սոցիալ-տնտեսական և քաղաքական պատմությանը, կովկասագիտությանը, Հայաստանի, Կովկասի և Առաջավոր Ասիայի պատմական աշխարհագրությանը: Կազմել է Հայաստանի պատմական քարտեզներ:

Սուրեն Երեմյանը պարգևատրվել է Հոկտեմբերյան հեղափոխության, «Պատվո նշան» և Աշխատանքային Կարմիր դրոշի շքանշաններով, արժանացել է Հայկական ԽՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչմանը:

Սուրեն Երեմյանը մահացել է 1992թ. Երևանում:

Ականավոր պատմաբան, ակադեմիկոս և քարտեզագիր Սուրեն Երեմյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Բաղրամյան պողոտա հ. 50գ հասցեում փակցնելու վերաբերյալ միջնորդություն է ներկայացվել ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն Ա. Մելքոնյանի կողմից:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՍՈՒՐԵՆ ԵՐԵՄՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Սուրեն Երեմյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում լրացումներ և/ կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՍՈՒՐԵՆ ԵՐԵՄՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Սուրեն Երեմյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում լրացումներ և/ կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ